ՀՏԴ 794.125 DOI: 10.53068/25792997-2022.3.7-112

ՇԱԽՄԱՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դասախոս Ե. Գ. Հակոբյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E-mail: ervand.hakobyan@sportedu.am

Առանցքային բառեր: Շախմատ, մրցակցություն, մտավոր զարգացում, ազդեցություն, դաստիարակություն, ընդունակություն, վերլուծություն:

Հետազոտության արդիականություն: Հասարակության զարգացման ներկայիս փուլում բարձր ինտելեկտուալ հնարավորություններ ունեցող մասնագետների պահանջարկն անշեղորեն աճում է:

Հայտնի է, որ այդ որակական հատկություններն անհատի մոտ հիմնականում ձևավորվում են զարգացման դպրոցական փուլում:

Առարկաների բազմատեսակ առկայությունում, որոնք ուղղված են մատաղ սերնդի ինտելեկտուալ ունակությունների ձևավորմանը, առանձնահատուկ տեղ է գրավում շախմատը: Գիտության և մշակույթի զարգացման պատմությունը համոզիչ կերպով վկայում է շախմատի հանդեպ մարդկության հետաքրքրության հաստատուն աճ:

Անցնելով բազմադարյա ուղի, շախմատն իր զարգացման ընթացքում անհատների խաղից վերածվել է միլիոնավոր մարդկանց սիրելի զբաղմունքի: Շախմատը, առանձնանալով գրավչությամբ, պարզությամբ և հասանելիությամբ իր ծանրակշիռ դերն ունի մարդկանց մոտ բազմակողմանի և ներդաշնակ զարգացման գործում՝ անկախ տարիքից, մասնագիտությունից, շախմատային որակավորման աստիճանից:

Մի շարք երկրներում, այդ թվում և Հայաստանում, հանրակրթական դպրոցական ծրագրերում ներառված է շախմատի ուսուցումը: Շախմատն ընկալվում է որպես խաղային բնույթի առարկա՝ ուղղված ընդհանուր մտավոր ունակությունների՝ մասնավորապես տրամաբանական և ստեղծագործական զարգացմանը:

Կատարված են բազմաթիվ հետազոտություններ, որոնք ուղղված են տարբեր որակավորում ունեցող շախմատիստների մտածողության գործընթացի ուսումնասիրմանը:

Ներկայումս աշխարհի առաջատար երկրների կրթական համակարգում կարևորվում է շախմատի կրթադաստիարակչական նշանակությունը՝ դրանք

դարձնելով ուսումնական գործընթացի բաղկացուցիչ ուղղություն:

Շախմատով համակարգված պարապմունքները նպաստում են սպորտի, արվեստի և գիտության միավորմանը, ճանաչողական պահանջմունքների բարձրացմանը: Սակայն պետք է արձանագրել, որ առկա ուսուցանող ծրագրերի մեծ մասը կրում են մանկավարժական բնույթ և չեն ընդգրկում ֆիզիոլոգիական և հոգեբանական ասպեկտները:

Վերը նշվածի համատեքստում գիտական հետաքրքրություն է ներկայացնում երեխաների շրջանում շախմատի ազդեցությունը, դրանց մասնագիտական կատարելագործման հիմնախնդիրների առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը: Բացահայտել երեխաների շրջանում շախմատի ազդեցության առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են.

1) Գնահատել շախմատի ազդեցության հետևանքները երեխաների զարգացման գործընթացում:

2) Բացահայտել բոլոր այն գործոնները, որոնք նպաստում են երեխաների մոտ շախմատի հանդեպ հետաքրքրասիրությանը:

3) Հիմնավորել շախմատի պարապմունքների ծանրաբեռնվածության ազդեցությունը և արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:

Հետազոտության ընթացքում իրականացվել է գրականության տեսական և մեթոդական վերլուծություն: Կիրառվել է մաթեմատիկական վիճակագրություն, սոցիոլոգիական հարցումներ, դիտարկումներ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն:

Այսօր շատ ծնողներ խորհում են՝ ինչպե՞ս մեծացնել եթե ոչ հանճարի, ապա գոնե մարդու, որը գրագետ կերպով կհայտնվի բարձր տեխնոլոգիաների աշխարհ: Ծնողները մտահոգվում են, թե ինչպե՞ս իրենց երեխաներին սովորեցնեն մտածել, նրանց մոտ զարգացնեն համբերատարության և աշխատասիրության որակներ:

Առկա են բազմաթիվ եղանակներ, որոնք ունակ են երեխայի մոտ զարգացնել զարմանահրաշ ունակություններ: Այդ եղանակներից մեկն էլ շախմատն է:

Որպես կանոն՝ շախմատի դպրոցներում ընդունելություն սկսվում է 5 տարեկանից, բայց լինում են նաև բացառություններ: Վերջին տարիներին թե' բժիշկները, թե' մանկավարժները, և թե' ծնողներն ահազանգում են, որ երեխաները դադարում են բակերում խաղալ:

Այսօրվա ժամանակակից երեխայի ամբողջ ազատ ժամանակը զբաղեցնում են համակարգչային տեխնոլոգիաները:

Վերոհիշյալ կախվածությունից ազատվելու լավ միջոց է շախմատը: Այս խաղը երեխաներին պարգևում է շատ ուրախություն և ընձեռում է մեծ ազդեցություն նրանց մտավոր և հոգեկան զարգացման վրա:

• Տրամաբանության զարգացում և տարածական երևակայություն:

Նախ և առաջ շախմատը մտքի մարզման լավագույն միջոցներից է, որը զգալիորեն ուժեղացնում է մարդու մտավոր կարողությունները:

Շախմատային խաղի ընթացքում տեղի է ունենում ուղեղի երկու կիսագնդերի միաժամանակյա աշխատանք, որի արդյունքում արձանագրվում է ինչպես տրամաբանական, այնպես էլ վերացական մտածողության ակտիվացում:

Շախմատի շնորհիվ ակտիվանում է ուղեղի ձախ կիսագունդը, որը պատասխանատու է տրամաբանական բաղադրիչի համար: Երեխան առաջին իսկ օրվանից, երբ սկսում է շախմատով զբաղվել, սովորում է տրամաբանորեն մտածել և դատողություններ անել [2]:

Պակաս կարևոր չէ նաև ուղեղի աջ կիսագնդի աշխատանքը, որը պատասխանատու է մոդելավորման և հնարավոր իրավիճակների ստեղծմանը, ինչն ուղղակիորեն ազդում է տարածական երևակայության զարգացման վրա:

Իրադարձությունների կանխատեսման ունակություն, ինչպես նաև խաղի բազմաբնույթ տարբերակներ հաշվարկելու կարողություն, արագընթաց որոշումներ կայացնել և վճռական քայլեր կատարել՝ ահա հիմնական հմտությունները, որ իրագործում է շախմատիստը:

• Հիշողության մարզումը և ուշադրության կենտրոնացումը:

Շախմատով զբաղվելու ժամանակահատվածում երեխայի մոտ ձևավորվում է տոկունություն և նստակյացություն, քանզի նա իր ուշադրությունը կենտրոնացնում է մի գործընթացի վրա:

Շախմատի ուսուցումն այս առումով հատկապես կարևոր է հիպերակտիվ երեխաների համար, որոնք շախմատով զբաղվելու ընթացքում դառնում են հանդարտ և հավասարակշռված:

Գիտափորձով ապացուցվել է, որ շախմատ խաղացող երեխաների մոտ մտավոր գործընթացների արագությունը դառնում է ավելի արագ: Նրանց մոտ ուսումնական առաջադիմությունը բարելավվում է, հատկապես ճշգրիտ գիտությունների ոլորտում [2]:

Այս փաստերին կարևորություն են տալիս աշխարհի շատ մանկավարժներ:

• Ինքնուրույնության և պատասխանատվության զարգացում:

Երեխան սովորում է ինքնուրույն մտածել և որոշումներ կայացնել, որոնք ունեն տրամաբանված և գիտակցված հիմք: Նույնիսկ թվացյալ պարզունակ լուծումները (խաղաքարով քայլ կատարել)

երեխային ուղղորդում են ինքնուրույնության և պատասխանատվության:

Նրանց մոտ ձևավորվում է գործողությունների պլանավորման ընդհանուր հմտություններ, որոնց անհրաժեշտությունը զգացվում է նույնիսկ նախադպրոցական տարիքում, որպեսզի երեխաները սովորեն ճիշտ տնօրինել իրենց ժամանակը, մտածեն ռազմավարորեն և հասնեն նպատակների: Շախմատը նաև սովորեցնում է երեխաներին չկայացնել հապճեպ որոշումներ, որոնք հաճախ սխալ են լինում:

• Համակարգված և ոչ ստանդարտ մտածելու կարողություն:

Մտավոր գործընթացի անկազմակերպվածությունը մարդկանց մեծամասնության մոտ լիովին տարածված երևույթ է: Վերոհիշյալ երևույթի դեմ պայքարի լավ միջոց է շախմատը: Շախմատը՝ որպես խաղ, և նրա ուսումնասիրումն ինքնին հանգեցնում է մտածողության կանոնակարգմանը:

Պարբերաբար խաղացված պարտիաները հանգեցնում են համակարգված մտածողության զարգացմանը, կառուցելով հստակ տրամաբանական շղթաներ՝ անկախ հանգամանքներից:

• Ստեղծագործական ունակությունների և հնարավորությունների զարգացում:

Իրավիճակներ, որտեղ անհրաժեշտ է կիրառել օրիգինալ, ոչ ստանդարտ քայլեր կամ գաղափարներ, որոնք գործնականում հանդիպում են յուրաքանչյուր պարտիայում: Ուժեղագույն վարպետների խաղացված պարտիաների վերլուծությունը նպաստում է ինտելեկտի այս որակների զարգացմանը:

Շախմատային խաղի գլխավոր արժանիքներից մեկն այն է, որ երեխայի համար կարող է վերածվել ստեղծագործական դպրոցի, միայնությունից ձերբազատվելու և ակտիվ ժամանցի, որը հնարավորություն է տալիս ինքնարտահայտվել և շփման հնարավորություն ընձեռել:

• Բնավորության ձևավորում:

Վաղ տարիքից սկսելով հրապուրվել շախմատով՝ երեխան ստանում է ոչ միայն մտավոր, այլև անձնային զարգացման հզոր խթան: Շախմատն օգնում է ձևավորել այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ մարտական բնավորություն, հուզական կայունություն, ամուր կամք, վճռականություն, հաղթելու ցանկություն:

Ընդ որում՝ պարտությունները, որոնք հասու են բոլորին, սովորեցնում են արժանապատիվ և տոկուն վերապրել անհաջողությունները՝ դրանցում տեսնելով զարգացման նոր հնարավորություններ:

Շախմատը սովորեցնում է նաև լինել ինքնաքննադատ և վերլուծել սեփական արարքները՝ դրանցից քաղելով արժեքավոր և օգտակար փորձ:

• Ժամանակի կառավարում:

Շախմատն իր ժամակարգով լինում է 3 տեսակ՝ դասական, ակտիվ և բլից: Դասական շախմատում պարտիայի համար յուրաքանչյուր խաղացողի տրվում է 2 ժամ, ակտիվում՝ կես ժամ, իսկ բլիցում՝ 5 րոպե: Եթե խաղացողը չի կարողանում տեղավորվել տվյալ ժամանակային սահմանափակման մեջ, նա պարտվում է:

Այսպիսով՝ շախմատն իր տարբեր ժամանակարգերի շնորհիվ սովորեցնում է ճիշտ և ռացիոնալ տնօրինել ժամանակը, ինչը կարևոր գործոն է դպրոցական դասապրոցեսի ժամանակ, ինչպես նաև հետագայում լուծելու առաջադրված խնդիրներն ընտրած մասնագիտությունում [5]:

Համոզվելու համար, թե ինչպիսի ազդեցություն է ունենում շախմատը երեխաների մտավոր զարգացման վրա, Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոցում անցկացվեց հետևյալ հետազոտությունը. 15 երեխաների, որոնք սովորում էին առաջին դասարանում, առաջարկվեց 10 տրամաբանական խնդիր, որոնք անհրաժեշտ էր լուծել 15 րոպեում, ընդ որում՝ այդ երեխաներից 5-ը պարապում էին շախմատ, 5-ը պարզապես խաղում էին շախմատ, իսկ մյուս 5-ը ծանոթ չէին շախմատային քայլերին:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվել է 1 միավոր:

Ստացված արդյունքները ներկայացված են 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Հաճախում եմ շախմատի դպրոց	**Խաղում եմ շախմատ**	**Չեմ խաղում շախմատ**
Յաղաբյան Ա., 7 միավոր	Ղուկասյան Հ., 5 միավոր	Սիմոնյան Ե., 4 միավոր
Սարգսյան Ա., 6 միավոր	Առաքելյան Ա., 4 միավոր	Դոլգով Բ., 3 միավոր
Մարկոսյան Վ., 9 միավոր	Զոհրաբյան Ս., 6 միավոր	Սարուխանյան Մ., 6 միավոր
Ադիյան Թ., 7 միավոր	Բախշյան Լ., 6 միավոր	Սմբատյան Ա., 3 միավոր
Խաչատրյան Ա., 8 միավոր	Բաբայան Գ., 7 միավոր	Մովսիսյան Ն., 3 միավոր

Եզրակացություն:

Ուսումնասիրելով և վերլուծելով առկա փաստագրական տվյալները՝ հանգեցինք հետևյալ եզրակացության:

Շախմատը սովորեցնում է երեխաներին հիմնավոր մտածել յուրաքանչյուր քայլը, սովորեցնում է վերլուծել սեփական դրությունը, սովորեցնում է կշռադա-

տել: Մարդիկ, որոնք մանկուց են յուրացրել շախմատային ամեն քայլը կատարել մտածված, այդ սովորույթը կիրառում են նաև այլ գործունեություններում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ շախմատն ունակ է դրականորեն փոխել դեռահասի կյանքը՝ ձևափոխել ագրեսիան մրցակցային ոգու, դպրոցում բարելավել առաջադիմությունը և բարձրացնել ինքնագնահատականը:

Վարքագծային խնդիրներ ունեցող երեխաների մոտ շախմատը կարող է զարգացնել նստակյացության ունակություններ՝ նվազեցնելով գերակտիվությունը: Կրտսեր տարիքային խմբերում իրականացված ուսումնասիրություններն արձանագրել են, որ շախմատով զբաղվող երեխաներն ավելի լավ են հաշվարկներ կատարում, նրանց մոտ բարձր է ուսման հանդեպ առկա մոտիվացիան, քան շախմատով չզբաղվող երեխաների մոտ:

Շախմատը, ոչ միայն մտավոր մարզաձև է, որը երեխաներին պարգևում է ուրախություն, այլև մտավոր զարգացման արդյունավետ գործնական միջոց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Амонашвили Ш.А., Гуманно-личностный подход к детям. М.: Институт практической психологии - Воронеж, 1998, 544 с

2. Богоявленская Б.А., Психология творческих способностей:

Учеб. пособие для студ. высш. учеб. заведений М.: Академия, 2002, 320 с.

3. Гришин В. Г., Малыши играют в шахматы М.: Просвещение 1991 198 с

4. Ипполитов Ф.В., Память школьника М.: «Знание» 1978, 48 с

5. Кормишкин А.М., Шахматы для всех. М.: Триумфальная арка 1997.- 288 с

6. Костьев А.Н., Уроки шахмат М.: ФиС 1984, 208с

7. Неверкович С.Д., Шахматы как предмет гуманитарного цикла в образовательной школе // Физическая культура: Воспитание, образование, тренировка 2001, №2 с11-15

THE INFLUENCE OF CHESS ON THE PROCESS OF CHILD DEVELOPMENT

Lecturer E. G. Hakobyan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: Chess, competition, intellectual development, influence, upbringing, abilities, analysis.

Purpose of research: To identify the peculiarities of chess influence among children.

Research methods and organization: In the course of the study, an analysis of theoretical and methodical literature was used. Mathematical and statistic methods, sociological surveys, and observations were also used.

Analysis of research results: The results of the research prove that children who play chess show significantly high results in logical processes, as well as in the ability to use the time presented rationally.

Thus, it is obvious that chess has an effective influence on the development of the mental abilities of children.

Conclusion: It can be concluded that chess teaches children to think thoroughly over each move,it teaches them to analyze their own position, it teaches them to think. People who have been taught to make each move deliberately since childhood, use this habit in other activities as well.

Chess is not only an intellectual sport that gives children joy, an effective means for mental development.

ВЛИЯНИЕ ШАХМАТ НА ПРОЦЕСС РАЗВИТИЕ ДЕТЕЙ

Преподаватель Е. Г. Акопян
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: шахматы, соперничество, умственное развитие, влияние, воспитание, способности, анализ.

Цель иследования: раскрывать особенности влияния шахмат в детской среде.

Методы и организация исследования. В ходе исследования использован анализ теоретической и методической литературы. Были использованы методы статистического анализа и социологические опросы.

Результаты исследования. Результаты проведенных исследований свидетельствуют, что дети, которые занимаются шахматами показывают сушественно высокие результаты в логических процессах, а также в умении рационального использования представленного времени. Таким образом, очевидно, что шахматы имеют эффективное влияние на развитие умственных способностей детей.

Краткие выводы. Можно заключать, что шахматы учат детям основательно обдумывать каждый ход, учат анализировать собственную позицию, делать заключения. Люди, которые с детства учили сделать каждый ход обдуманно, эту привычку применяют и в других видах дейтельности.

Шахматы не только интелектуальный вид спорта, который детям дарит радость, но и эффективное средство для умственного развития.

Հոդվածն ընդունվել է 01. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 10.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան